

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/10

18 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ 03.11.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 28.10.2014 թ-ի թիվ 5010182 ստուգման ակտի 1-ին և 22-րդ կետերի դեմ:

«ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ, 64-րդ և 69-74-րդ հոդվածներով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով, «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստորև ներկայացնում է սույն բողոքը, առարկելով ստուգման ակտի 1-ին և 22-րդ կետերի դեմ:

Ակտում նշված է, որ խախտվել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջները, որպես խախտման հիմք հանդիսացել է Ընկերության կողմից ձեռք բերված և արտահանման միջոցով վաճառված 15584 կգ ձմերուկի սերմի ձեռքբերման փաստաթուղթը անապրանք փաստաթուղթ համարելու հանգամանքը, որը հակասում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասին, քանի որ Ընկերության և ՀՀ քաղաքացի Գուրգեն Թովմասյանի (անձ. AB 0629398, տրվ. 30.01.1998թ., 025-ի կողմից) միջև 15 նոյեմբերի 2010 թ-ին կնքված գյուղատնտեսական արտադրանքի գնման պայմանագրով Ընկերությունը նշված անձից ձեռք է բերել 15584 կգ ձմերուկի սերմ, որը պատշաճ կերպով ստացել է փաստաթղթավորում, և որպես գյուղատնտեսական արտադրանք հիմք է ընդունվել Վեդու քաղաքային համայնքի ղեկավար Վ.Բարսեղյանի կողմից 15 նոյեմբերի 2010 թ-ին տրված տեղեկանքն այն մասին, որ Գուրգեն Թովմասյանը Արարատի մարզում ունի 5 /հինգ/ հա հողատարածք և զբաղվում է գյուղատնտեսական արտադրանքների արտադրությամբ, մասնավորապես՝ կորիզավոր ձմերուկի: Ձեռք բերված ձմերուկի սերմը 24.11.2010 թ. C2739 մաքսային հայտարարագրով ամբողջությամբ արտահանվել է Գերմանիա՝ վաճառվելով ZALIN PRODUCTS Genussmittelproduction կազմակերպությանն Ընկերության կողմից դարս գրված 01 հաշիվ ապրանքագրով առ 24.11.2010 թ. 31168 եվրո ընդհանուր գումարով: Առկա է նաև Ընկերության և ZALIN PRODUCTS Genussmittelproduction-ի միջև կնքված պայմանագիրը, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 24.11.2010 թ-ին տրված AM 0019188 բուսասանիտարական հավաստագիրը: Ապրանքների արտահանումը թույլատրված է նաև ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատի կողմից 26.11.2010 թ-ին տրված թիվ 2/3302 փորձաքննության ակտով (ապրանքի ծագման հավաստագիր): Իսկ ապրանքների տեղափոխումը հավաստվում է ULUSOY տրանսպորտային կազմակերպության կողմից 24.11.2010 թ-ին կազմված 0281 բեռնամաքսային ամփոփագրով, որը 26.11.2010 թ-ին հաստատված է Գուգարքի տարածաշրջանային մաքսատան դրոշմակնիքով թիվ 416 նշումով:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ փաստաթղթերը չեն համարվում անապրանք, և սույն հոդվածով նախատեսված պատասխանատվությունը չի կիրառվում, եթե անձն ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն կրում է գործարքը կատարելու պարտավորություն: Վերը նշված հանգամանքները վկայում են այն մասին, որ 15 նոյեմբեր 2010 թ-ին կազմված գնման պայմանագրով Գուրգեն Թովմասյանը կատարել է իր պարտավորությունը՝ պայմանագրում նշված ապրանքը հանձնելով «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ին ի դեմս գլխավոր կառավարիչ Հ.Գելիջիի, իսկ վերջինս ընդունել է ապրանքը և պատշաճ կերպով վճարել դրա դիմաց: Իսկ ապրանքների հետագա վաճառքն էլ արտահանման միջոցով հաստատում է, որ ապրանքները փաստացի արտահանվել են, որը չէր կարող տեղի ունենալ, եթե գործարքն անապրանք որակվեր:

Ելնելով վերը նկարագրված փաստերից, որոնք վկայում են, որ Ընկերությունը չի խախտել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի դրույթները, Ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել 28.10.2014 թ-ի թիվ 5010182 ակտի 1-ին և 22-րդ կետերը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ Ֆինանսների նախարարի 25.06.2014 թ-ի թիվ 5010182 հանձնարարգրի համաձայն «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 28.10.2014 թ-ի թիվ 5010182 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 20.999.589 դրամ:

«ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ի բողոքը վերաբերվում է ստուգման ակտի 1-ին և 22-րդ կետերին:

Ստուգման ակտի 22-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունը 24.11.2010 թ-ին ՀՀ տարածքից արտահանել է 15584 կգ ձմերուկի սերմ, որը համաձայն գյուղատնտեսական արտադրանքի գնման ակտի ընկերությունը ձեռք էր բերել 14493120 դրամով ՀՀ քաղաքացի Արարատի մարզի ք.Վեդի, Թամանյան 3ա/35 հասցեի բնակիչ Գուրգեն Ռուբիկի Թովմասյանից, որն ըստ Վեդու քաղաքային համայնքի ղեկավարի Վ.Բարսեղյանի տեղեկանքի մշակում է 5 հինգ հեկտար հողատարածք: Վերը նշված գործարքի իսկությանը պարզելու համար նյութերն ուղարկվել են ՀՀ Ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության, որի կողմից Վանաձորի ՏՀՏ ներկայացված նյութերից պարզվել է, որ վերը նշված գործարքը չի կատարվել, գյուղատնտեսական արտադրանքի գնման ակտը կեղծ է, որը համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համարվում է անապրանք փաստաթուղթ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի դրույթներով ստուգման ակտով կիրառվել է նույն հոդվածով նախատեսված

տուգանքը՝ գումարով 14.493.120 դրամ: Բացի այդ, ընկերության կողմից 2010 թ-ի շահութահարկի հաշվարկով հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից վերագրյալ ձմերուկի սերմի ձեռք բերման արժեքը՝ գումարով 14.493.120 դրամ, նվազացվելու համար լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել նաև շահութահարկի գծով՝ ընդհանուր գումարով 4.918.032 դրամ:

«ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ կողմից գյուղատնտեսական արտադրանքի գնման ակտով ք.Վեդի, Թամանյան Յա/35 հասցեի բնակիչ Գուրգեն Ռուբիկի Թովմասյանից 15.584 կգ ձմերուկի սերմ՝ գումարով 14.493.120 դրամ, ձեռք բերված լինելու վերաբերյալ, հարկ է նշել հետևյալը:

Սպիտակ քաղաքի բնակիչ, «Վանուխի» ԲԲԸ կառավարիչ Վանիկ Ասատրյանի կողմից 2010 թ-ի դեկտեմբերի 16-ին ՀՀ ոստիկանություն հաղորդում է տրվել այն մասին, որ Նիդերլանդների Թագավորության քաղաքացի, «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ի կառավարիչ Հաջիկ Գելիջիկի կողմից, ՀՀ-ից Եվրոպա է արտահանվել «Վանուխի» ԲԲԸ-ին պատկանող շուրջ 17 տոննա ձմերուկի սերմ՝ առանց այդ մասին իրեն տեղեկացնելու:

Հաղորդման կապակցությամբ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊԳ վարչությունում նախապատրաստված նյութերն ուղարկվել են Արարատի քննչական բաժանմունք, որտեղ նյութերի լրացուցիչ նախապատրաստումից հետո՝ 06.05.2011 թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 26105811 քրեական գործը:

Քրեական գործի նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ Գուրգեն Թովմասյանը «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ի կառավարիչ Հաջիկ Գելիջիկի հետ միասին 15.11.2010 թ-ին կազմել են իրավունք վերապահող ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող գյուղատնտեսական արտադրանքի գնման կեղծ ակտ՝ համաձայն որի Գուրգեն Թովմասյանը 14.493.120 դրամի դիմաց «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ-ին՝ ի դեմս Հաջիկ Գելիջիկի, վաճառել է 15.584 կգ ձմերուկի սերմ՝ 1 կգ 930 դրամով:

Ելնելով վերագրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտի 1-ին և 22-րդ կետերով խախտումներն արձանագրվել են, ինչպես նաև այդ խախտումների համար լրացուցիչ պարտավորություններն առաջադրվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ 28.10.2014 թ-ի թիվ 5010182 ստուգման ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ
